



«15» հունիսի 2010թ

## Հ Ր Ա Մ Ա Ն

№ 71

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ  
ՄԱՅԻՍԻ 13-Ի N 60 ՀՐԱՄԱՆԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N 432 որոշման 1-ին կետով հաստատված կարգի 13-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակարանների (բնակելի տների) հատկացման հարցերով հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 11-ին կայացած նիստի N 12 արձանագրությունը.

### Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2010 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բազմաբնակարան շենքերից բնակարան ստացող ընտանիքների ցուցակները հաստատելու մասին» N 60 հրամանում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) ուժը կորցրած ճանաչել հրամանի N 1 հավելվածով հաստատված` ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, 2008 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ սահմանված կարգով հաշվառված ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով 2010 թվականին պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բազմաբնակարան շենքերից 1-սենյականոց բնակարան ստացող ընտանիքների ցուցակի 50-րդ կետը.

2. Սույն հրամանի կատարման հսկողությունն իրականացնում են անձամբ:

Նախարար՝

Վ.Վարդանյան